

ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Կոդ TRM14-0001-05/3 PUB	Խմբագրություն 19
Կազմեց	Հաստատված
Բիզնես գործընթացների կառավարման բաժին	Վարչության 15/12/2025թ. թիվ 59 արձանագրություն Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան_____
Կիրառման ոլորտ	Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Վճարային քարտերի բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01/02/2026թ.
Ուժը կորցնելու ամսաթիվ	

1. Նպատակը

Սույն պայմանների նպատակն է սահմանել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ կողմից հաճախորդներին Վճարային քարտերի տրամադրման, դրանց ակտիվացման, ինչպես նաև Վճարային քարտերով իրականացվող գործառնությունների և անվտանգության ապահովման հիմնական կանոնները:

2. Սահմանումներ

- **Բանկ** - «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ
- **Վճարային քարտ/Քարտ** - «ArCa», «Visa», «Mastercard» և «UnionPay International» միջազգային վճարային համակարգերի Վճարային քարտեր (այդ թվում Թվային քարտեր), որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և նախատեսված են Բանկում բացված Քարտային հաշիվներով կանխիկ միջոցներ ստանալու, անկանխիկ վճարումներ և այլ բանկային գործառնություններ կատարելու համար:
- **Թվային քարտ** - «Visa» և «Mastercard» միջազգային վճարային համակարգերի կողմից առանց ֆիզիկական կրիչի թողարկվող էլեկտրոնային քարտեր, որոնք Քարտապանին հասանելի են EvocaTOUCH համակարգում, և որոնց թղթենացման (թվային նույնացուցիչների կցման) եղանակով հնարավոր է իրականացնել քարտային գործարքներ:
- **Քարտապան կամ Հաճախորդ՝**
 - 14 (տասնչորս) տարեկանից բարձր բոլոր այն ֆիզիկական անձիք, որոնց Բանկը տրամադրել է Վճարային քարտ/եր (այդ թվում նվեր քարտ/եր),
 - Բոլոր այն անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձիք, որոնց Բանկը տրամադրել է «Business» քարտ:
- **Վճարահաշվարկային համակարգ** - «ArCa», «Visa», «MasterCard» և «UnionPay International» մասնագիտացված քարտային վճարահաշվարկային համակարգեր, որոնց միջոցով իրականացվում է Բանկի կողմից թողարկված Վճարային քարտերի սպասարկման և հաշվարկային գործընթացները:
- **Քարտային հաշիվ** - Բանկում Հաճախորդի անվամբ բացված բանկային հաշիվ, որը կցվում է վերջինիս Վճարային քարտին, և որում հաշվառվում են Վճարային քարտով և դրա հետ կապված բոլոր գործառնությունները:
- **Հիմնական քարտ** - Քարտ, որի գծով տրամադրվում է Լրացուցիչ կամ Կից քարտ,
- **Լրացուցիչ քարտ** - Սակագներով սահմանված, արտոնյալ պայմաններով Քարտապանին կամ նրա կողմից նշված անձին (անձանց) տրամադրվող մեկ այլ Քարտ, որի Քարտային հաշիվը տարբերվում է Հիմնական քարտի Քարտային հաշվից,
- **Կից քարտ** - Քարտապանի դիմումի համաձայն վերջինիս կամ երրորդ անձի անունով թողարկվող Քարտ, որը կցվում է Հիմնական քարտի քարտային հաշվին,
- **PIN ծածկագիր** - Քարտապանի ինքնությունը ստուգելու և Քարտով իրականացվող գործարքները հավաստագրելու համար Քարտապանին տրամադրվող անհատական նույնականացման համար (ԱՆՀ): Այն Հաճախորդին տրամադրվում է հատուկ փակ ծրարով կամ ստեղծվում է Հաճախորդի կողմից բանկումատի միջոցով:
- **CVV/CVC կոդ** - Վճարային քարտի դարձերեսին նշված և Քարտապանին նույնականացնող կոդ, որը կիրառվում է Քարտապանի կողմից ինտերնետ միջավայրում գործարքներ կատարելիս: Թվային քարտի դեպքում այն արտացոլվում է EvocaTOUCH-ում՝ քարտի պատկերի վրա քողարկված տեսքով:
- **Վճարային սահմանաչափ** - դրամական միջոցների չափ (Քարտային հաշվի մնացորդի և Վարկային սահմանաչափի հանրագումար՝ բացառությամբ չնվազող մնացորդի), որի սահմաններում Քարտապանը կարող է ստանալ կանխիկ գումար և կատարել անկանխիկ վճարումներ:
- **Վարկային սահմանաչափ** - Քարտապանին Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցներ, որը օգտագործվում է Վճարային քարտի կամ Քարտային հաշվի միջոցով:
- **Գերաձախս** - Վճարային քարտի Վճարային սահմանաչափից ավել օգտագործված՝ ներառյալ Բանկի սակագների համաձայն Բանկի կողմից գանձված գումար, որը համարվում է Քարտապանի պարտավորությունը Բանկի նկատմամբ: Ձևավորված Գերաձախսի նկատմամբ Բանկի Սակագների համաձայն կարող են կիրառվել տույժեր:
- **Հավաստագրում** - գործընթացն, որի ընթացքում Քարտապանը հաստատում է իր կողմից իրականացվող վճարումը կամ այլ քարտային գործողությունը՝ Բանկի կամ վճարային համակարգերի կողմից սահմանված նույնականացման միջոցներով (օրինակ՝ PIN ծածկագիր, մեկանգամյա գաղտնաբառ/OTP, կենսաչափական տվյալներ և այլն), ինչի արդյունքում գործարքը ճանաչվում է օրինական և թույլատրված:
- **Թղթենացում** - Քարտի թվային համարժեքի ստեղծում, որը թույլ է տալիս «Visa» կամ «Mastercard» քարտով վճարումներ և կանխիկացումներ կատարել «Apple Wallet» կամ «Google Wallet» դրամապանակների միջոցով՝ առանց ֆիզիկական քարտը օգտագործելու:

- **Անհպում վճարում** (contactless payment) – քարտային վճարում, որը իրականացվում է առանց քարտը առևտրի կետում տեղադրված POS տերմինալում կամ ԱԳՄ–ում ֆիզիկապես ընթերցելու: Վճարումը կատարվում է քարտը, դրա թվային համարժեքը (թոքենը) կամ այլ համապատասխան սարքը տերմինալին մոտեցնելով՝ օգտագործելով առանց համան տեխնոլոգիաներ (NFC և համանման լուծումներ):
- **Apple Pay** – էլեկտրոնային դրամապանակ, որը հնարավորություն է ընձեռում Apple հեռախոսի կամ տվյալ համակարգի այլ սարքերով իրականացնել վճարումներ թոքենացված քարտերով:
- **Google Pay** – էլեկտրոնային դրամապանակ, որը հնարավորություն է ընձեռում Android հեռախոսի կամ տվյալ համակարգի այլ սարքերով իրականացնել վճարումներ թոքենացված քարտերով:
- **Մեկանգամյա գաղտնաբառ (OTP գաղտնաբառ)** – Բանկի կամ վճարային համակարգերի կողմից սահմանված դեպքերում՝ երբ Քարտապանը իրականացնում է քարտի ակտիվացում, PIN ծածկագրի ստեղծում, առցանց քարտային գործարքներ կամ քարտի հետ կապված այլ գործողություններ, Բանկում գրանցված կոնտակտային տվյալներին ուղարկվող նույնականացման և հավաստագրման նպատակով ուղարկվող մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ է (OTP), որը նա պետք է մուտքագրի համապատասխան գործողությունն ավարտելու համար:
- **Սակագներ** – Բանկի Վարչության կողմից հաստատված «Սակագներ և դրույքներ» (TRM14-0002-02/1),
- **Հեռակառավարման համակարգ** – Բանկի կողմից շահագործվող Հաճախորդների հեռավար ինքնասպասարկման EvocaTOUCH և EvocaONLINE համակարգեր,
- **EvocaTOUCH** – Բանկի մոբայլ հավելված,
- **EvocaONLINE** – Բանկի ինտերնետ բանկինգ առցանց հավելված,

3. Քարտի տրամադրում և ակտիվացում

- 3.1. Բանկը հաճախորդներին տրամադրում է «ArCa» տեղական, «Visa», «Mastercard», «UnionPay International» միջազգային վճարային համակարգերի Վճարային քարտեր (այդ թվում՝ «Visa» և «Mastercard» Թվային քարտեր):
- 3.2. Քարտը Քարտապանին տրամադրվում է Բանկի և Քարտապանի միջև նախապես համաձայնեցված եղանակով: Թվային քարտը Քարտապանին հասանելի է դառնում Հեռակառավարման համակարգերով տրամադրելու միջոցով:
- 3.3. Քարտային հաշիվները բացվում և վարվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով:
- 3.4. Կից քարտեր Բանկը կարող է տրամադրել Քարտապանի կողմից նշված անձանց դիմումի համաձայն: Քարտային հաշիվը տնօրինում է Հիմնական քարտի Քարտապանը: Կից քարտի Քարտապանը պատասխանատվություն է կրում տրամադրված Կից քարտ/եր-ով իրականացված գործարքների համար: Կից քարտը կարող է տրամադրվել անմիջականորեն այն օգտագործողին միայն Հիմնական քարտի Քարտապանի նախապես ներկայացված գրավոր համաձայնության հիման վրա:
- 3.5. Լրացուցիչ քարտ կարող է տրամադրվել ինչպես Քարտապանին, այնպես էլ Քարտապանի կողմից նշած անձին, եթե նման հնարավորությունը նախատեսված է Հիմնական քարտի սակագներով: Լրացուցիչ քարտի հայտի դեպքում բացվում է նոր քարտ, որին կցված հաշիվը Հիմնական քարտի Քարտային հաշվից տարբերվում է: Ընդ որում, և Հիմնական քարտի Քարտապանը և Լրացուցիչ քարտի Քարտապանը ֆիզիկապես պետք է մոտենան մասնաճյուղ, որտեղ Հիմնական քարտի Քարտապանը բանավոր կերպով նշում է, թե ով պետք է հանդես գա որպես Լրացուցիչ քարտի Քարտապան:
- 3.6. Բանկը Քարտապանի Քարտային հաշվի դրական մնացորդի նկատմամբ կարող է հաշվեգրել տոկոսագումարներ, եթե դա նախատեսված է տվյալ քարտատեսակի համար սահմանված Բանկի Սակագներով:
- 3.7. Քարտի տրամադրման գործընթացը կազմակերպվում է Քարտապանի կողմից Բանկ ներկայացրած Քարտի պատվիրման հայտի հաստատումից հետո հետևյալ ժամանակահատվածում՝
 - 2-3 (երկուսից երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի գլխամասային գրասենյակի կամ Երևանյան որևէ մասնաճյուղի տարածքում,
 - 5-7 (հինգից յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղի տարածքում տրամադրելու դեպքում,
 Բանկի սակագներով սահմանված դեպքերում քարտը կարող է տրամադրվել ավելի կարճ ժամկետում:
- 3.8. Առաքման եղանակով Քարտապանի կողմից տրամադրված հասցեով Քարտը տրամադրելու դեպքում առաքման ժամկետը պայմանավորված է առաքման ծառայություններ մատուցող ընկերությունների պայմաններով:
- 3.9. Քարտապանը Վճարային քարտը ստանալիս պետք է ներկայացնի ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ:

- 3.10. Բանկը Քարտապանին Վճարային քարտը կարող է տրամադրել PIN ծածկագրով կամ առանց PIN ծածկագրի: Վճարային Քարտը և PIN ծածկագիրը Քարտապանին տրամադրվում են առանձին փակ ծրարներով:
- 3.11. Վճարային քարտը Քարտապանին կարող է տրամադրվել առանց PIN ծածկագրի: Այս դեպքում PIN ծածկագիրը բանկումատի միջոցով սահմանում է Քարտապանը՝ կիրառելով Բանկի կողմից SMS հաղորդագրությամբ իր հեռախոսահամարին ուղարկված OTP-ն: Բանկումատի միջոցով քարտի ակտիվացման համար Քարտապանը պետք է մուտքագրի ստացված OTP-ն բանկումատի էկրանում բացված համապատասխան դաշտում, որից հետո կկարողանա ինքնուրույն սահմանել PIN ծածկագիրը: PIN ծածկագրի սահմանումը կարող է կատարվել միայն այն բանկերի բանկումատներով, որոնք հանդիսանում են «ArCa» վճարային համակարգի մասնակից և ունեն անհրաժեշտ տեխնիկա-ծրագրային ապահովում:
- 3.12. Քարտը և PIN ծածկագիրը ստանալուն պես Քարտապանը պետք է ստուգի ծրարի փակ և անվնաս լինելը, քարտի և PIN- ծածկագրի առկայությունը ծրարում, համապատասխանությունը Քարտի պատվիրման հայտին, ինչպես նաև Քարտի վրա նշված տվյալների ճշտությունը: Անհամապատասխանությունների դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:
- 3.13. Հաճախորդը PIN ծածկագիրը կարող է փոփոխել նաև մասնաճյուղում կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված հայտի հիման վրա՝ նախապես վճարելով Սակագներով սահմանված վճարը: PIN ծածկագրի գեներացման դեպքում Հաճախորդը Քարտը պետք է կրկին ակտիվացնի բանկումատի միջոցով և սահմանի նոր ծածկագիր:
- 3.14. Բանկի կողմից Վճարային քարտերը տրամադրվում են մինչև 5 (հինգ) տարի ժամկետով:
- 3.15. Հաճախորդի ներկայացրած դիմումի հիման վրա Բանկը կարող է վարկավորել Հաճախորդի Քարտային հաշիվը՝ վերջինիս հետ կնքելով համապատասխան պայմանագիր ինչպես Բանկի գործունեության վայրում, այնպես էլ Հեռակառավարման համակարգերի միջոցով:
- 3.16. Եթե Հաճախորդը Վճարային քարտի պատրաստ լինելու/վերաթողարկված լինելու մասին ծանուցում ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում չի դիմում Բանկ Վճարային քարտը ստանալու համար, ապա Բանկը իրավունք ունի ոչնչացնել Վճարային քարտը՝ փակելով Քարտային հաշիվը, և չվերադարձնել գանձված միջնորդավճարները:
- 3.17. Եթե քարտի առաքման հասցեով իրականացված առաքման ընթացքում հնարավոր չի եղել ապահովել քարտի և/կամ PIN ծածկագրի տրամադրումը՝ Պայմաններին համապատասխան, կամ եթե քարտի պատվերի հայտում նշված է եղել ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական հասցե, ինչի հետևանքով առաքումն անհնար է եղել, ապա քարտն ու PIN ծածկագիրը վերադարձվում են Բանկ / պահվում են Բանկում, և Քարտապանը կարող է դրանք ստանալ Բանկի տարածքում:
- 3.18. Բանկն իրավունք ունի փակել քարտը, եթե այն չի ակտիվացվել առաքումից 6 (վեց) ամսվա ընթացքում:
- 3.19. Հաճախորդը կարող է EvocaTOUCH բջջային հավելվածով կամ Բանկի կողմից հասանելի այլ հեռահար եղանակներով պատվիրել Թվային քարտ: Թվային քարտը տրամադրվում է տվյալ տեսակի Քարտի համար սահմանված Սակագներով: Բանկը Հաճախորդներին տրամադրում է «Visa» և «Mastercard» միջազգային վճարային համակարգի Թվային քարտ/եր: Թվային քարտն ակտիվացվում է և դառնում է հասանելի Հեռակառավարման համակարգում Քարտի պատվիրումից անմիջապես հետո:
- 3.20. Թվային քարտի պատվիրումից հետո Հավելվածը գեներացնում է Թվային քարտ և ձևավորվում է դրա վիրտուալ պատկերը: Թվային քարտով իրականացվող գործառնությունների արտացոլման նպատակով Քարտապանի անվամբ բացվում է Քարտային հաշիվ, որն արտացոլվում է EvocaTOUCH հավելվածում:
- 3.21. Անհպում վճարումներ կատարելու համար Հաճախորդը, կախված իր սարքի օպերացիոն համակարգից, պետք է Թվային քարտը ավելացնի Apple Pay/Google Pay էլեկտրոնային դրամապանակներին:

4. Վճարային քարտի վճարներ և գանձումներ

- 4.1. Քարտապանը վճարում է Բանկին Վճարային քարտի սպասարկման հետ կապված Սակագներով սահմանված միջնորդավճարներ, եթե Բանկի և Քարտապանի միջև այլ գրավոր համաձայնություն առկա չէ:
- 4.2. Վճարային քարտի սպասարկման միջնորդավճարի վճարումը Քարտապանը կատարում է Քարտը պատվիրելիս կամ Բանկի Սակագներով սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով: Վճարային քարտի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:
- 4.3. Եթե Հաճախորդը քարտից և այլ ծառայություններից օգտվում է աշխատավարձային նախագծի շրջանակում, ապա տվյալ Քարտի և բանկային մյուս ծառայությունների նկատմամբ կիրառվում են տվյալ աշխատավարձային նախագծի պայմանները:

- 4.4. Եթե Քարտապանը այլևս չի ստանում իր աշխատավարձը Բանկի միջոցով կամ որևէ հիմքով դադարեցրել է աշխատանքային հարաբերությունները, ապա Բանկը իրավասու է ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնել աշխատավարձային նախագծի շրջանակում տրամադրված Քարտի և այլ բանկային ծառայությունների հատուկ սակագներն ու պայմանները: Այդ պահից սկսած Բանկը կարող է կիրառել Բանկում գործող Քարտի և ծառայությունների ստանդարտ սակագներն ու պայմանները կամ իր հայեցողությամբ, Քարտապանի նկատմամբ կիրառելի այլ արտոնյալ կամ հատուկ սակագներ և պայմաններ:
- 4.5. Վճարային քարտի սպասարկման միջնորդավճարի գծով չմարված պարտավորության դեպքում մինչև Հաճախորդի կողմից պարտավորության լրիվ մարումը Բանկի կողմից Վճարային քարտը բլոկավորվում է: Սպասարկման վճարի գանձումից հետո, այն ավտոմատ մինչև 3 ժամվա ընթացքում ապաբլոկավորվում է:
- 4.6. Քարտով գործարքների իրականացման, ինչպես նաև Բանկի կողմից Վճարային քարտի սպասարկման հետ կապված վճարների գանձման արդյունքում Քարտի Վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում Քարտային հաշվին ձևավորվում է Գերաձախս: Բանկի սակագներով կարող է սահմանվել Գերաձախսի գծով տուժանք: Բանկին վճարման ենթակա Գերաձախսի գումարները Քարտապանը պարտավոր է մարել անմիջապես:
- 4.7. Բանկի սակագներով Վճարային քարտի համար սահմանված միջնորդավճարները և Վճարային քարտի սպասարկման հետ կապված այլ վճարները՝ ներառյալ Քարտային հաշվին ձևավորված Գերաձախսը, պարտավորությունները կազմող գումարները Բանկի կողմից գանձվում են անակցեպտ եղանակով՝ առանց Քարտապանի հանձնարարականի: Գանձումն առաջնահերթ կատարվում է Քարտային հաշվից, իսկ Քարտային հաշվին միջոցների բացակայության դեպքում՝ Քարտապանի Բանկում ունեցած այլ հաշիվներից: Ընդ որում, Քարտապանը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը իր բանկային հաշիվ(ներ)ին: Գանձվող պարտավորության գումարի և գանձման հաշվի արժույթների տարբերության դեպքում Քարտով կամ Քարտային հաշվով իրականացված գործարքների հետ կապված բոլոր գանձումները կատարվում են Բանկի կողմից տվյալ պահին սահմանված տվյալ արժույթի փոխարժեքով:
- 4.8. Չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից վերադարձվելուց հետո Բանկը մուտքագրում է Քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները (առկայության դեպքում): Անկախ չեղարկված գործարքի գումարի վերադարձման հանգամանքից և ժամկետից՝ Քարտապանը պետք է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:
- 4.9. Բանկը պատասխանատվություն չի կրում առևտրի/սպասարկման կետի կողմից մատուցված որևէ ծառայության դիմաց գանձված և Քարտապանի Քարտային հաշվից ելքագրված վճարի համար:

5. Վճարային քարտի օգտագործման, պահպանման և անվտանգության կանոնները

- 5.1. Նախքան Վճարային քարտն օգտագործելը Քարտապանը պարտավոր է ստուգել տվյալ Քարտը սպասարկող սարքի կամ սարքավորման միջոցով Վճարային քարտով իրականացվող գործարքների տեսակները (կանխիկի տրամադրում, կանխիկի մուտքագրում, վճարումներ և այլն), ինչպես նաև Վճարային քարտը սպասարկող վճարահաշվարկային համակարգերով («ArCa», «Mastecard», «Visa», «UnionPay International» և այլն) սպասարկելու հնարավորությունը (այդ թվում նաև վիրտուալ միջավայրում գործարքներ կատարելիս):
- 5.2. Քարտապանի կողմից քարտի PIN ծածկագիրը սահմանելիս խորհուրդ է տրվում ընտրել հնարավորինս բարդ ծածկագիր, այդ թվում՝ չօգտագործել իրար հաջորդող կամ կրկնվող թվեր:
- 5.3. Վճարային քարտի, PIN ծածկագրի, CVV/CVC կոդի և Բանկի կողմից տրամադրված գաղտնաբառի օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:
- 5.4. PIN ծածկագիրը, OTP և CVV/CVC գաղտնագրերը Քարտապանը պետք է պահպանի գաղտնի և այն հասանելի չդարձնի այլ անձանց: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից իր PIN ծածկագիրը, OTP կամ CVV/CVC-ն երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով Վճարային քարտի ոչ օրինական և Քարտապանի կողմից չարտոնված օգտագործման համար:
- 5.5. Քարտապանը կարող է իր հայեցողությամբ փոխել PIN ծածկագիրը՝ համապատասխան հնարավորությամբ բանկումատի միջոցով: PIN ծածկագրի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել գործող PIN ծածկագիրը և ստեղծել նոր PIN ծածկագիր: Բանկումատի միջոցով PIN ծածկագրի փոփոխություն Հաճախորդը կարող է կատարել անվճար, ամսական 2 անգամ, իսկ ավել քանակի դեպքում՝ Սակագներով սահմանված միջնորդավճարները վճարելով, եթե այդպիսիք սահմանվել են:
- 5.6. Քարտապանն իրավունք չունի փոխանցել Վճարային քարտը, հայտնել PIN ծածկագիրը, CVV/CVC կոդը, գաղտնաբառը այլ անձանց: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի Վճարային

- քարտը, PIN ծածկագիրը, **CVV/CVC** կոդը, գաղտնաբառը, քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց:
- 5.7. Արգելվում է գրել PIN ծածկագիրը Վճարային քարտի վրա, ինչպես նաև Վճարային քարտը և PIN ծածկագիրը պահել միասին:
- 5.8. Քարտի ապօրինի օգտագործման կամ ապօրինի օգտագործման վտանգի մասին տեղեկություններ, կասկած ունենալու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:
- 5.9. Վճարային քարտը օգտագործելիս PIN ծածկագիրը անհրաժեշտ է հավաքել այնպես, որ տեսանելի չլինի այլ անձանց համար և չտեսագրվի որևէ տեսաձայնագրող սարքի միջոցով:
- 5.10. Գործարք կատարելիս PIN ծածկագիրը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում քարտը կարող է բլոկավորվել:
- 5.11. Բանկումատը կարող է առգրավել Քարտը, եթե՝
- 5.11.1. Քարտը ունի տեխնիկական խնդիրներ կամ վնասվածքներ,
- 5.11.2. Բանկումատով գործարք կատարելուց հետո Քարզը Բանկումատից դուրս է եկել և հաջորդող 20 (քսան) վայրկյանի ընթացքում Քարտապանը այն չի վերցրել:
- 5.12. Վճարային քարտով գործարքների իրականացման ժամանակ Քարտապանը պետք է մուտքագրի PIN ծածկագիրը, եթե գործարքի կատարման համար օգտագործվող սարքավորման միջոցով տվյալ տեսակի քարտով գործարքի իրականացման համար պահանջվում է PIN ծածկագրի մուտքագրում: Ինտերնետային միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) PIN ծածկագրի մուտքագրում չի պահանջվում:
- 5.13. ՀՀ տարածքում Անհատական վճարում իրականացվող մինչև 20 000 ՀՀ դրամի (կամ համարժեք արտարժույթի) գործարքների դեպքում PIN ծածկագրի մուտքագրում չի պահանջվում: ՀՀ-ից դուրս իրականացվող անհատական գործարքների դեպքում PIN ծածկագրի անհրաժեշտությունը որոշվում է տվյալ երկրի համար համապատասխան վճարային համակարգի գործող կանոններով և պահանջներով:
- 5.14. Ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) Քարտով գործարքների իրականացման ժամանակ PIN ծածկագրի փոխարեն կիրառվում է CVV/CVC կոդի և/կամ OTP մուտքագրում:
- 5.15. Արգելվում է ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) մուտքագրել (հայտնել) PIN ծածկագիրը: PIN ծածկագիրը հայտնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել Քարտը:
- 5.16. Արգելվում է ցանկացած այլ անձի (այդ թվում Բանկի անունից հանդես եկող անձնաց) հայտնել OTP և CVV/CVC կոդերը, ինչպես նաև PIN ծածկագիրը:
- 5.17. Ինտերնետ միջավայրում քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (secure-payment website): Առցանց խաղատները, բուքմեյքերական գրասենյակները համարվում են առավել ռիսկային:
- 5.18. Քարտապանը պետք է առավել ուշադիր լինի այն գործարքների մասով, որոնք իրականացվում են ժամանցի և նմանատիպ այլ վայրերում: Խորհուրդ է տրվում Վճարային քարտը չվստահել այլ անձանց և թույլ չտալ Վճարային քարտի օգտագործումը Քարտապանի տեսադաշտից դուրս:
- 5.19. Չի կարելի օգտվել այն բանկումատներից, կանխիկացման և առևտրի/սպասարկման կետերից և սարքավորումներից, որոնք Քարտապանի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև, եթե դրանց քարտ ընթերցող սարքին, ստեղծաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կաչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:
- 5.20. Սույն պայմաններով սահմանված կանոնների և պահանջների խախտումով Վճարային քարտով կատարված գործարքների, ինչպես նաև քարտի, PIN-ծածկագրի, գաղտնաբառի, Վճարային քարտի վրա նշված տեղեկատվության (Վճարային քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ), OTP գաղտնաբառի օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
- 5.21. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Բանկը Հաճախորդի Բանկում գրանցված հեռախոսահամարին ուղարկում է քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություններ՝ գանձելով Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարներ: 5001 ՀՀ դրամ և ավելի գումարով գործարքների համար SMS ծառայությունը քարտի տրամադրման պահից ակտիվացվում է լռելյայն, եթե Քարտապանը չի հրաժարվել դրանից համապատասխան դիմում-հայտով: Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե Քարտապանը չի ստացել SMS հաղորդագրությունը բջջային կապի կամ հեռահաղորդակցության ցանցի խափանումների, ծածկույթի սահմանափակումների, կամ վճարային համակարգերի կարգաբերումների պատճառով:
- 5.22. Քարտապանը պարտավոր է Քարտապանի՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային

հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում: Քարտապանի հեռախոսը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում դրանում պահվող տվյալները կամ հեռախոսի միջոցով ձեռքբերվող տեղեկատվությունը բացահայտվելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

- 5.23. Քարտապանը կարող է Հեռակառավարման համակարգերի միջոցով ինքնուրույն իրականացնել Քարտի հետ կապված հասանելի կարգաբերումներ, որոնք Բանկի համար հավասարեցվում են Քարտապանի կողմից գրավոր տրված հանձնարարականներին:
- 5.24. Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալիս Քարտապանը պարտավոր է ստուգի գործարքի գումարը և կարգավիճակը (կատարված, մերժված և այլն): Գործարքի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանը պարտավոր է անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ անհրաժեշտության դեպքում բլոկավորելով Քարտը:
- 5.25. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանը Քարտի գործողության ընթացքում ցանկացած պահին կարող է սահմանել կամ փոփոխել Քարտով կատարվող գործարքների սահմանափակումները՝ գործարքի տեսակից և/կամ աշխարհագրությունից կախված: Սահմանափակումները կիրառվում են միայն հավաստագրվող գործարքների նկատմամբ: Քարտի վերաթողարկման դեպքում նախկին սահմանափակումները չեն փոխանցվում նոր Քարտին, և Քարտապանը պետք է դրանք կրկին սահմանի՝ ներկայացնելով համապատասխան հայտ: Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում կամ առավել ռիսկային սպասարկման կետերում Քարտի կիրառմամբ գործարքների կատարումը:
- 5.26. Բանկն իրավասու է իր հայեցողությամբ կասեցնել Քարտով մատուցվող ծառայությունները, եթե ունի հիմնավոր կասկածներ Քարտով կատարված գործարքի (կամ գործարքների) հավաստիության վերաբերյալ: Ծառայությունների կասեցումը վերացվում է այն դեպքում, երբ Բանկը ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն կամ բավարար պարզաբանումներ տվյալ գործարքների հավաստիությունը հաստատելու համար:

6. Վճարային քարտի օգտագործումը

6.1. Վճարային քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները՝

- 6.1.1. Քարտային հաշվի համալրում,
- 6.1.2. Քարտային հաշվից կանխիկացում,
- 6.1.3. Անկանխիկ վճարումների իրականացում,
- 6.1.4. Քարտից քարտ փոխանցումներ:

6.2. Քարտային հաշվի համալրում

- 6.2.1. Քարտապանը Քարտային հաշվի համալրում կարող է իրականացնել կանխիկ և անկանխիկ եղանակներով:
- 6.2.2. Քարտային հաշվին կանխիկ եղանակով համալրում իրականացնելու համար Քարտապանը մոտենում է Բանկի Գլխամասային գրասենյակ կամ Մասնաճյուղ և կատարում է համալրումը: Քարտային հաշվին կանխիկ եղանակով համալրումներ կարող են իրականացվել նաև Բանկի կանխիկի մուտքի հնարավորությամբ բանկոմատների, վճարային տերմինալների, ինչպես նաև այլ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների վճարային տերմինալների միջոցով:
- 6.2.3. Քարտային հաշվին անկանխիկ եղանակով համալրում իրականացվում է Բանկի կամ այլ Բանկերի, Քարտապանի կամ այլ անձանց բանկային հաշիվներից Քարտապանի Քարտային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:
- 6.2.4. Բանկը պատասխանատվություն չի կրում այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ այն դեպքերում, երբ Քարտապանի Քարտին կամ Քարտային հաշվին գումարները դառնում են հասանելի ժամանակային խզումով, ուշացումով ակտիվացմամբ կամ ուշացումով հաշվառմամբ: Նման իրավիճակները կարող են պայմանավորված լինել տեխնիկական խնդիրներով կամ խափանումներով, ինչպես նաև երրորդ անձանց, այդ թվում՝ վճարային համակարգերի կողմից ենթակա գործողությունների հետաձգմամբ, ուշացմամբ կամ չկատարումով:
- 6.2.5. Բանկի Գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում Բանկի վճարային տերմինալներով կանխիկ մուտքագրված գումարները Քարտի վրա հասանելի են լինում անմիջապես, իսկ բանկոմատներով կատարված մուտքերը/cash-in/ հաշվին հասանելի են դառնում 1-3 աշխատանքային օրվա ընթացքում: Բանկի այլ հաշիվներից Քարտային հաշվին փոխանցումը քարտի վրա հասանելի է

դառնում, որպես կանոն, մինչև 5 (հինգ) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում, այդ թվում նաև «ArCa» համակարգի պրոցեսինգային կենտրոնում): Այլ բանկերի և կազմակերպությունների կանխիկի մուտքագրման սարքավորման հնարավորություններն ու սահմանափակումները՝ կապված մուտքագրվող գումարի արժույթի, թղթադրամի արժողության/տեսակի հետ և այլն, սահմանվում են տվյալ սարքավորման սպասարկող կազմակերպության և (կամ) Վճարահաշվարկային համակարգի կողմից, և նման տեղեկատվությունը, որպես կանոն, ներկայացված է տվյալ կազմակերպության և (կամ) Վճարահաշվարկային համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում կամ այդ սարքավորման վրա:

6.3. Քարտային հաշվից կանխիկացում

- 6.3.1. Քարտապանը կանխիկացման գործառնությունները կարող է իրականացնել բանկոմատների (ATM) կամ POS-տերմինալների միջոցով, տվյալ կետի կողմից տվյալ Վճարահաշվարկային համակարգի քարտերի ընդունման պարագայում:
- 6.3.2. Կանխիկացման գործառնություններ իրականացնելիս կանխիկացման միջնորդավճարը կարող է հաշվարկվել և գումարվել պահանջվող գումարին հավաստագրման հարցում իրականացնելիս, ընդ որում, տվյալ դեպքում գործարքի իրականացումը կարող է մերժվել, եթե պահանջվող գումարի և դրա միջնորդավճարի հանրագումարը գերազանցում է հավաստագրման կամ Վճարային սահմանաչափերը:
- 6.3.3. Այլ բանկերի բանկոմատներում կամ կանխիկացման կետերում կանխիկացման գործարքներ իրականացնելիս այն սպասարկող բանկը կարող է սահմանել կանխիկացման լրացուցիչ միջնորդավճարներ (բացի Բանկի միջնորդավճարից) կամ արտարժույթի առավաճառքի փոխարժեքներ (Բանկը խորհուրդ է տալիս Քարտապանին այլ բանկերի բանկոմատներում կամ կանխիկացման կետերում կանխիկացման գործարքներ իրականացնելիս տեղեկանալ տվյալ բանկի սակագներին):
- 6.3.4. Բանկը պատասխանատվություն չի կրում այլ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկացման գործառնությունների համար գանձված այլ կազմակերպությունների սահմանած լրացուցիչ միջնորդավճարների համար:
- 6.3.5. Քարտից քարտ փոխանցումների հետ կապված (C2C) գործարքների դեպքում գումարը Վճարային քարտից ելքագրվում կամ մուտքագրվում է անմիջապես, իսկ Քարտային հաշվում հաշվառվում է, որպես կանոն, հետևյալ ժամկետներում՝
 - «ArCa» համակարգում կատարված գործարքների դեպքում 1-3 աշխատանքային օրը,
 - «ArCa» համակարգից դուրս կատարված գործարքների դեպքում 2-5 աշխատանքային օր հետո:
- 6.3.6. Բանկոմատներից և կանխիկացման կետերից կանխիկացման գործարքներ իրականացնելու նկատմամբ Բանկի սակագներով և դրույթներով սահմանվում է մեկ օրվա ընթացքում կատարվող կանխիկացման գործարքի/ների առավելագույն Վճարային սահմանաչափ և քանակ:
- 6.3.7. Սահմանված սահմանաչափերը գերազանցող չափով գումարի կանխիկացման համար անհրաժեշտ է Բանկ ներկայացնել համապատասխան դիմում: Սահմանաչափի վերանայման համար կարող է գանձվել միջնորդավճար, որի չափը սահմանվում է Բանկի Սակագներով:
- 6.3.8. ՀՀ տարածքում բանկոմատների միջոցով կանխիկացման և կանխիկի մուտքագրման գործառնություններն իրականացվում են ՀՀ դրամով:
- 6.3.9. ՀՀ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:
- 6.3.10. ՀՀ տարածքից դուրս գտնվող այլ բանկերի կանխիկացման կետերում կանխիկացման գործառնություններն իրականացվում են տվյալ երկրի արժույթով:

6.4. Անկանխիկ վճարումների իրականացում

- 6.4.1. Քարտապանը Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ կարող է իրականացնել տերմինալների, բանկոմատների և բանկային ինքնասպասարկման այլ սարքերի, Հեռակառավարման համակարգերի, էլեկտրոնային դրամապանակների, այլ մոբայլ հավելվածների միջոցով և ինտերնետ միջավայրում (վիրտուալ տերմինալների միջոցով՝ տվյալ կետի կողմից տվյալ Վճարահաշվարկային համակարգի քարտերի ընդունման պարագայում):
- 6.4.2. Անկանխիկ վճարումների իրականացման դեպքում գործարքի թույլտվությունը Քարտապանի կողմից կարող է տրվել PIN ծածկագրի մուտքագրման միջոցով, իսկ վիրտուալ համակարգում CVV կոդի մուտքագրման և ստացված OTP գաղտնաբառի մուտքագրման միջոցով:

6.4.3. Վճարային քարտով կատարված գործարքները հաստատող փաստաթղթերի՝ Բանկում առկա պատճենները Քարտապանը կարող է ստանալ Բանկից՝ համաձայն Բանկի Սակագների:

6.5. Արտաթույլով արտահայտված գործառնությունների կատարում

6.5.1. Վճարային քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես Քարտային հաշվի արժույթով, այնպես էլ Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով:

6.5.2. Հաշվի արժույթով կատարված գործարքի դեպքում գործարքի գումարը Քարտային հաշվից գանձվում է առանց փոխարկման՝ նույն արժույթով:

6.5.3. Եթե Քարտով կատարված գործարքի արժույթը տարբեր է Քարտային հաշվի արժույթից, ապա գործարքի ձևակերպման ժամանակ գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի և գործարքի հաշվառման և գործարքի հավաստագրման փոխարժեքները կարող են տարբերվել:

6.5.4. «ArCa» պրոցեսինգային կենտրոնի շրջանակներում, եթե քարտով կատարվում է գործարք, որի արժույթը տարբերվում է քարտային հաշվի արժույթից, ապա այդ գործարքի փոխարկումն իրականացվում է հետևյալ կարգով՝

6.5.4.1. **Գործարքի կատարման պահին (գործարքի հավաստագրման պահին) փոխարկման համար հիմք է հանդիսանում.**

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված գործարքի գումարի առքի կամ վաճառքի փոխարժեքը՝ նվազեցվելով կամ ավելացվելով «ArCa» պրոցեսինգային կենտրոնի կողմից տվյալ արժույթի համար սահմանված տոկոսային շեղումը:

6.5.4.2. **Գործարքի հաշվեգրման պահին (հետագա փաստացի գանձման ժամանակ).**

Գործարքը ենթակա է վերահաշվարկի՝ հաշվի առնելով հաշվեգրման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքները: Այն դեպքում, երբ քարտային հաշվի արժույթը ՀՀ դրամ է իսկ գործարքի արժույթը այլ արժույթ՝ ապա ելքային գործարքների համար փոխարկվում է վաճառքի փոխարժեքով, մուտքային գործարքների համար՝ առքի փոխարժեքով: Իսկ այն դեպքում երբ քարտային հաշվի արժույթը ԱՄՆ դոլար/Եվրո է, իսկ գործարքի արժույթը ՀՀ դրամ, ապա գործարքի արժույթը փոխարկվում է Քարտի արժույթի՝ հաշվի առնելով հաշվեգրման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքը, ընդ որում ելքային գործարքների դեպքում փոխարկվում է առքի փոխարժեքով, մուտքային գործարքների դեպքում՝ վաճառքի:

6.5.5. «ArCa» պրոցեսինգային կենտրոնի շրջանակներից դուրս՝ «Visa», «Mastercard» և «UnionPay International» վճարային համակարգերում իրականացված գործարքների դեպքում արժույթի փոխարկումները կատարվում են հետևյալ հաջորդականությամբ.

6.5.5.1. **Հավաստագրում**

Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքի գումարը փոխարկվում է Քարտի արժույթով՝ հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքները՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված տոկոսադրույքը:

6.5.5.2. **Հաշվանցում**

Այն դեպքերում, երբ միջազգային Վճարահաշվարկային համակարգերի միջոցով կատարված գործարքի արժույթը տարբերվում է ԱՄՆ դոլարից («Visa» Վճարահաշվարկային համակարգի դեպքում՝ նաև Եվրոյից), գործարքի հաշվանցման ժամանակ իրականացվում է հետևյալ փոխարկումը.

- Գործարքի գումարը նախ վերահաշվարկվում է ԱՄՆ դոլարի՝ տվյալ Վճարահաշվարկային համակարգի («Visa», «Mastercard», «UnionPay International» և այլն) կողմից գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:
- Արժույթի փոխարկման արդյունքում՝ գործարքի գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար գանձվում է միջնորդավճար, որը կազմում է գործարքի գումարի 2 (երկու) տոկոսի չափով:

6.6. Քարտային հաշվից ելքագրում

6.6.1. Վճարային համակարգերից ստացված գործարքի գումարը, որն արտահայտված է ԱՄՆ դոլարով («Visa» Վճարահաշվարկային համակարգի դեպքում՝ նաև Եվրոյով), փոխարկվում է Քարտային հաշվի արժույթով և ելքագրվում է Քարտային հաշվից՝ հաշվի առնելով գործարքի հաշվեգրման օրվան

նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործարքների համար սահմանված առքի կամ վաճառքի վերջին փոխարժեքները:

- 6.6.2. Գործարքների հաշվանցման ընթացքում իրականացված արժույթային փոխարկումների արդյունքում առաջացած փոխարժեքների տարբերություններից պատճառված հնարավոր վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

6.7. Վճարային քարտի առգրավում

- 6.7.1. Քարտապանի կողմից Վճարային քարտը սխալ օգտագործելու դեպքում (օրինակ՝ Քարտը Բանկումատում մոռանալու, ծրագրային խափանումների և այլ դեպքերում) այն կարող է առգրավվել բանկումատի կողմից:
- 6.7.2. Եթե բանկումատը գտնվում է Բանկի մասնաճյուղի տարածքում՝ Քարտապանը աշխատանքային ժամերի ընթացքում կարող է ստանալ այն՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
- 6.7.3. Եթե բանկումատը գտնվում է այլ վայրում, ապա առգրավված Վճարային քարտը ստանալու համար անհրաժեշտ է առգրավման վերաբերյալ SMS հաղորդագրությունն ստանալուց հետո մոտենալ Բանկի համապատասխան մասնաճյուղ:
- 6.7.4. Վճարային քարտը բլոկավորված լինելու դեպքում Քարտապանը ներկայացնում է ապաբլոկավորման դիմում:
- 6.7.5. Բանկը կարող է առգրավել Վճարային քարտը, եթե հայտնաբերի Վճարային քարտի գողացած լինելու, Քարտապանի կողմից այն անօրինական օգտագործելու փաստը կամ Քարտապանի կողմից Քարտային պայմանագրի դրույթների և այլ օրինական պահանջների խախտման դեպքում:

6.8. Վճարային քարտի բլոկավորում/ապաբլոկավորում

- 6.8.1. Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման գործընթացը կարող է իրականացվել՝ Քարտապանի կամ Բանկի նախաձեռնությամբ՝ ելնելով անվտանգության, իրավական կամ գործառնական հիմքերից: Բոլոր հաղորդումները և դիմումները պարտադիր կերպով գրանցվում են Բանկի ներքին համակարգերում և համարվում են պաշտոնական տեղեկացման պահ:
- 6.8.2. Քարտապանը կարող է բլոկավորել իր Վճարային քարտը՝ Վճարային քարտը գողանալու, կորստի, վնասվելու և այլ դեպքերում, այցելելով Բանկ կամ զանգահարելով Բանկի **(+374 10) 605555, (+374 99) 605555, (+374 98) 205555՝ կամ 8444 կարճ համարին՝** հայտնելով Վճարային քարտի ստացման հայտ-պայմանագրի/դիմումի մեջ իր կողմից նշված գաղտնաբառը:
- 6.8.3. Քարտապանը կարող է բլոկավորել կամ ապաբլոկավորել իր Վճարային քարտը Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ ներկայացնելով համապատասխան հայտ:
- 6.8.4. Բանկի զանգերի կենտրոնի զանգի միջոցով կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով Քարտի բլոկավորումը իրականացվում է անմիջապես, իսկ Բանկի մասնաճյուղում դիմում ներկայացնելու դեպքում Քարտի բլոկավորումը կարող է իրականացվել 15-30 րոպեների ընթացքում:
- 6.8.5. Վճարային քարտի ապաբլոկավորումը Քարտապանը կարող է իրականացնել դիմելով Բանկի մասնաճյուղեր կամ Հեռակառավարման համակարգերով ներկայացնելով համապատասխան հայտ:
- 6.8.6. Քարտապանի գրավոր կամ Հեռակառավարման համակարգերով ստացված դիմումների հիման վրա Քարտի ապաբլոկավորումը իրականացվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Բանկը կարող է մերժել Քարտի ապաբլոկավորումը:
- 6.8.7. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանին հասցրած այն վնասի համար, որը կատարվել է Քարտը կորցնելու և այդ մասին Բանկին հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում:
- 6.8.8. Քարտապանը պարտավոր է հատուցել Վճարային քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները:
- 6.8.9. Վճարային քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում այն վերաթողարկել: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման Քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի Քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում Քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
- 6.8.10. Բանկը կարող է բլոկավորել քարտը չարտոնված գործարքների, Բանկի հանդեպ պարտավորությունների խախտման, իրավապահ մարմինների պահանջի կամ անվտանգության նկատառումներով:
- 6.8.11. Բլոկավորումն իրականացվում է դիսկի հայտնաբերման պահից սկսած մինչև 1 ժամվա ընթացքում:
- 6.8.12. Ապաբլոկավորումն իրականացվում է Հաճախորդի դիմումի հիման վրա՝

- 6.8.12.1. Հաճախորդի տեղեկացվածության և պատասխանատվության հաստատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններում կամ՝
- 6.8.12.2. Բանկի կողմից՝ անվտանգության գնահատումից հետո՝ մինչև 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.8.13. Քարտի բլոկավորումը չի դադարեցնում Քարտի հետ կապված միջնորդավճարների հաշվարկը և գանձումը:

6.9. Վճարային քարտի վերաթողարկում

- 6.9.1. Վճարային քարտի օգտագործման ժամկետը լրանալուց առաջ Քարտապանը դիմումի համաձայն կարող է վերաթողարկել այն:
- 6.9.2. Վճարային քարտի ժամկետի ավարտից հետո այն չի վերաթողարկվում, եթե Քարտի գործողության ժամկետի լրացմանը նախորդող 10 (տաս) օրվա ընթացքում Քարտապանը չի տեղեկացրել իր Վճարային քարտը վերաթողարկելու ցանկության մասին:
- 6.9.3. Վերաթողարկված քարտը Քարտապանին է տրամադրվում ոչ ուշ, քան՝
 - 6.9.3.1. Երևանի մասնաճյուղերի դեպքում՝ Քարտապանի ներկայացրած դիմումի հաստատումից 2-3 աշխատանքային օրվա ընթացքում,
 - 6.9.3.2. մարզերում գտնվող մասնաճյուղերի դեպքում՝ Քարտապանի ներկայացրած դիմումի հաստատումից 5-7 աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.9.4. Վերաթողարկում իրականացվում է նաև Վճարային քարտի կորստի, վնասվելու, քարտային տվյալների երրորդ անձանց հասանելի և Քարտապանի ցանկությամբ այլ դեպքերում՝ համաձայն դիմումի:

6.10. Քարտային գործառնությունների բողոքարկում

- 6.10.1. Վճարային քարտով կամ դրա ռեկվիզիտների կիրառմամբ ցանկացած գործարքի կատարման և գործարքի հետ կապված խնդիրների (Վճարային քարտի չվերադարձ, թղթադրամի չտրամադրում և այլն) առաջացման դեպքում Քարտապանը կարող է բողոքարկել՝ համաձայն դիմումի:
- 6.10.2. Քարտով իրականացված գործարքների վերաբերյալ առարկություններ կամ անհամաձայնություն ունենալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված ձևով Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ ոչ ուշ, քան գործարքի կատարումից կամ ապրանքի առաքման/ծառայության մատուցման համար նախատեսված ամսաթվից 60 (վաթսուն) օրվա ընթացքում: Հայտի հետ անհրաժեշտ է ներկայացնել բողոքարկվող գործարքի հետ կապված փաստաթղթերը և Բանկի պահանջով՝ այլ տեղեկություններ կամ փաստաթղթեր: Ներկայացված դիմումը Բանկի կողմից ուսումնասիրվում է առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում և ընթացք տրվում լրկալ և միջազգային վճարային համակարգերի հետգանձումների կանոններին համապատասխան:
- 6.10.3. Դիմումի հիման վրա Բանկը իրականացնում է հետգանձման գործընթաց, որի արդյունքում բավարարում է Քարտապանի բողոքարկման դիմումը, եթե այն հիմնավորված է:
- 6.10.4. Բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է հետևյալ ժամկետներում՝
 - 6.10.4.1. «ArCa» վճարային համակարգում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 40 (քառասուն) օրվա ընթացքում,
 - 6.10.4.2. Միջազգային վճարային համակարգերում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում,
 - 6.10.4.3. Բանկի բանկոմատներով կատարված կանխիկ գումարի մուտքագրման կամ ելքագրման գործարքների բողոքարկման դեպքում (եթե բանկոմատը չի տրամադրել կանխիկ գումարը, սակայն այն նվազեցվել է Քարտային հաշվից կամ Քարտապանը մուտքագրել է կանխիկ գումար, սակայն քարտային մնացորդը չի ավելացել)՝ հայտի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.10.5. Եթե Քարտապանը համաձայն չէ Բանկի կայացրած որոշման հետ, ապա գործընթացն իրականացվում է համաձայն Բանկում գործող «Հաճախորդների կողմից ներկայացված բողոքների կառավարման» կարգի (PRD15-0009-14) պահանջների:
- 6.10.6. Քարտապանի կողմից Բանկին անհիմն Գործարքի բողոքարկման դիմումների ներկայացման համար Բանկի սակագներով կարող են սահմանվել տուգանքներ:

6.11. Քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության և Քաղվածքի տրամադրում

- 6.11.1. Քարտապանին տեղեկատվություն տրամադրվում է հեռախոսազանգերի կամ նամակագրության միջոցով (նախապես Գաղտնաբառի միջոցով նույնականացնելով նրան), ինչպես նաև Քարտային հաշվի քաղվածքի միջոցով:
- 6.11.2. Վճարային քարտով իրականացվող գործառնությունների վերաբերյալ Քարտային հաշվի քաղվածքը Բանկը տրամադրում է Քարտապանի կողմից համաձայնեցված եղանակով (էլեկտրոնային փոստով, նշված հասցեով կամ Բանկի տարածքում առձեռն), նվազագույնը մեկամսյա պարբերականությամբ:
- 6.11.3. Քաղվածքը համարվում է Քարտապանի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 երեսուն օրվա ընթացքում Քարտապանը չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ:
- 6.11.4. Հաճախորդը կարող է Հեռակառավարման համակարգերի միջոցով դիտել նախընտրած ժամանակահատվածի քաղվածքը, եթե Քարտի գործողության ժամկետը չի լրացել:
- 6.11.5. Քարտային հաշվի քաղվածքը չի ներառում հավաստագրված կամ չհավաստագրված դեռևս Բանկի կողմից չհաշվանցված գործարքը: Արդյունքում հնարավոր է տարբերություն իրական մնացորդի և քաղվածքում ներկայացված մնացորդի միջև: Հաշվանցում իրականացնելուց հետո գործարքի արտացոլման ժամանակ նշվելու են երկու ամսաթիվ՝ գործարքի կատարման ամսաթիվը և գործարքի հաշվանցման ամսաթիվը:
- 6.11.6. Քարտապանի ցանկության դեպքում Քարտային հաշվի մնացորդի վերաբերյալ կարող է տրամադրվել տեղեկանք: Տեղեկանքը տրամադրվում է հայտի ներկայացման նույն օրը, սակայն տեղեկանքում նշվում է հայտի ներկայացմանը նախորդող գործառնական օրվա ավարտի դրությամբ հաշվի մնացորդը: Եթե Քարտապանը ցանկանում է ստանալ Քարտային հաշվի մնացորդի վերաբերյալ տեղեկանք հայտի ներկայացման օրվա դրությամբ, ապա տեղեկանքը տրամադրվում է հայտի ներկայացման հաջորդ օրը: Նույն սկզբունքով Քարտապանի ցանկության դեպքում կարող է տրամադրվել նաև Քարտային հաշվով կատարված գործարքների վերաբերյալ քաղվածք:
- 6.11.7. Քարտապանի կողմից Վճարային քարտի պատվիրման Հայտ-պայմանագրով SMS տեղեկացումների վերաբերյալ նշում չկատարելը Բանկի կողմից դիտարկվում է որպես դրանց ստացման համար տրված համաձայնություն: Քարտապանն իրավունք ունի հրաժարվել SMS տեղեկացումների ծառայությունից համաձայն դիմումի: SMS տեղեկացման ծառայությունը թույլ է տալիս Քարտապանին ցանկացած հավաստագրման մասին ստանալ SMS հաղորդագրություն: Հաշվի առնելով այն, որ Վճարային քարտերով գործառնությունների մեծամասնությունն իրականացվում է Հավաստագրում ստանալուց հետո, Քարտապանը հնարավորություն ունի արդյունավետ կերպով և ժամանակի իրական ռեժիմում տեղեկանալ ցանկացած հավաստագրվող գործարքի իրականացման մասին: Ծառայությունը հատկապես կարևոր է Վճարային քարտի զեղծարար օգտագործումը կանխելու համար: Քարտային հաշվով գործառնությունների վերաբերյալ SMS տեղեկացման ծառայությունը թույլ է տալիս նաև վերահսկել անմիջապես Քարտապանի Քարտային հաշիվը: Ծառայության միջոցով Քարտապանը կարող է տեղեկանալ Քարտային հաշվի մնացորդի, Քարտային հաշվի ելքերի և մուտքերի մասին: Միայն SMS տեղեկացման ծառայության ակտիվացման դեպքում է գործում ինտերնետի միջոցով գործարքներ կատարելու առավել անվտանգ՝ 3D Secure համակարգը: Այն նվազեցնում է online վճարումների կայքերում քարտով զեղծարարություններ կատարելու ռիսկերը: 3D Secure ծառայությունը կարող է ակտիվացված լինել ինչպես գրանցված հեռախոսահամարին նամակ ուղարկելու, այնպես էլ հաճախորդի՝ Բանկում գրանցված էլ.հասցեի միջոցով:

6.12. Վճարային քարտի փակում

- 6.12.1. Վճարային քարտի պայմանագիրը կարող է դադարեցվել ինչպես Բանկի այնպես էլ Քարտապանի նախաձեռնությամբ:
- 6.12.2. Այն դեպքում, երբ Քարտապանը ցանկանում է Վճարային քարտի գործողության ժամկետը լրանալուց շուտ փակել իր Վճարային քարտը՝ համաձայն դիմումի կամ Վճարային քարտի ժամկետի ավարտի (եթե Քարտապանը չի ցանկանում այն երկարաձգել կամ Վճարային քարտը վերաթողարկել):
- 6.12.3. Քարտի փակման դեպքում Քարտապանը պետք է քարտը վերադարձնի Բանկ:
- 6.12.4. Քարտը փակելիս այդ քարտի բոլոր հավելյալ քարտերը ևս փակվում են:
- 6.12.5. Քարտի փակումը չի դադարեցնում քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և տուժանքները:
- 6.12.6. Պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդը պարտավորություն է կրում նաև այն գործարքների հետևանքով պարտավորությունների առաջացման դեպքում վճարման համար, որոնք կատարվել են նախքան Պայմանագրի դադարեցումը:

- 6.12.7. Քարտի փակումից հետո եթե հաշվին առկա է դրական մնացորդ ապա քարտի հաշվի հետագա սպասարկումն իրականացվում է համաձայն Բանկում գործող ընթացակարգի և հաշիվը փակվում է, երբ հաշվի մնացորդը զրոյանում է:
- 6.12.8. Վճարային քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը: Վճարային քարտի փակման դեպքում Քարտապանը պարտավոր է վերադարձնել այն Բանկ:

6.13. Քարտային գործառնությունների մոնիտորինգ և անվտանգություն

- 6.13.1. Բանկն հնարավոր զեղծարարությունների բացահայտման համար 24/7 ռեժիմով իրականացնում է քարտային գործարքների մոնիտորինգ:
- 6.13.2. Բանկն իրավունք ունի հնարավոր զեղծարարությունների կանխարգելման նպատակով լրացուցիչ տեղեկատվություն կամ հավաստագրում ստանալու նպատակով իրականացնել հեռախոսազանգեր Քարտապանին կամ ուղարկել նամակ գրանցված էլ հասցեի կամ հեռակառավարման համակարգի միջոցով
- 6.13.3. Բանկը պատասխանատվություն չի կրում՝
- 6.13.3.1. Հաճախորդի անհասանելիության կամ հաճախորդի կողմից տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով վերջինիս կրած վնասների համար:
- 6.13.3.2. Երրորդ անձանց կողմից մատուցվող և շահագործվող կապուղիների կամ ցանցերի, էլեկտրամատակարարման համակարգերի կամ ս«ArCa» վորումների խափանումների հետևանքով Քարտապանի կրած վնասների համար,
- 6.13.3.3. Առևտրային կետերի կողմից առանց PIN-ծածկագրի մուտքագրման գործարքների մերժման հետևանքով Քարտապանի կրած վնասների համար,
- 6.13.3.4. Առևտրային կամ սպասարկման կետերի կողմից քարտով իրականացվող գործարքի իրավաչափության ստուգման նպատակով կատարված գործողությունների հետևանքով Քարտապանի կրած վնասների համար,
- 6.13.3.5. Քարտով իրականացված գործարքների գծով երրորդ անձանց կողմից կիրառված միջնորդավճարների համար,
- 6.13.3.6. Առևտրային և սպասարկման կետերի կողմից գործարքների գծով սահմանված լրացուցիչ անվտանգային սահմանաչափերի կիրառման հետևանքով Քարտապանի կրած վնասների համար,
- 6.13.3.7. NFC հնարավորությամբ քարտերի կիրառման հետևանքով քարտի տվյալները երրորդ անձանց հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած կորուստների համար:

7. Քարտի թոքենացում և մոբայլ (NFC) վճարումներ

- 7.1. Մոբայլ (NFC) վճարումները Բանկի բջջային հավելվածի (այսուհետ՝ Հավելված) կամ մոբայլ սարքի վրա տեղադրված այլ ընկերության կողմից տրամադրվող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով Անհայում վճարումներ են, որոնց իրականացման համար անհրաժեշտ է Հավելվածում կամ Համակարգում կցել քարտը՝ ստեղծելով քարտի թոքենացված համարժեքը (այսուհետ՝ թոքենացված քարտ):
- 7.2. Մոբայլ (NFC) վճարումները մոբայլ սարքի վրա տեղադրված այլ ընկերության կողմից տրամադրվող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (Apple Pay, Google Pay) Անհայում վճարումներ են, որոնց իրականացման համար անհրաժեշտ է Հավելվածում կամ Համակարգում կցել քարտը՝ ստեղծելով քարտի թոքենացված համարժեքը (այսուհետ՝ թոքենացված քարտ):
- 7.3. Հաճախորդը միևնույն քարտը կարող է թոքենացնել տարբեր մոբայլ սարքերի վրա տեղադրված Հավելվածներում (ստեղծելով մեկից ավելի թոքեն) կամ Համակարգերում՝ նույն քարտի համար ստեղծելով առավելագույնը 10 թոքեն:
- 7.4. Հավելվածում քարտի թոքենացումը հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե մոբայլ սարքն ունի ապաբլոկավորման ակտիվացված պաշտպանիչ որևէ հնարավորություն (մատնահետք, դեմքով նույնականացում, PIN կամ այլ):
- 7.5. Համակարգը գործում է IOS օգտատերերի՝ IOS13 և բարձր օպերացիոն համակարգերով մոբայլ սարքերի համար, և Android օգտատերերի՝ 10.2 և բարձր օպերացիոն համակարգերով մոբայլ սարքերի համար, որոնք ունեն NFC տեխնոլոգիայի կիրառման հնարավորություն:
- 7.6. Քարտի թոքենացման գործընթացում հաճախորդի քարտի տվյալների անվտանգությունը երաշխավորված է՝ համապատասխան վճարային համակարգի կողմից սահմանված կանոնների համաձայն:
- 7.7. Հնարավոր է թոքենիզացնել Բանկի կողմից թողարկված Visa տեսակի բոլոր քարտերը, ինչպես նաև Mastercard տեսակի քարտերը

- 7.8. Մոբայլ (NFC) վճարումները կարող են իրականացվել աշխարհի բոլոր առևտրի կետերում, որտեղ սպասարկվում են համապատասխան վճարային համակարգի քարտեր և որտեղ տեղադրված են անհպում սպասարկող POS տերմինալներ:
- 7.9. Մոբայլ (NFC) վճարում կատարելու համար անհրաժեշտ է ապաբլոկավորել հեռախոսը՝ օգտագործելով հեռախոսի ապաբլոկավորման պաշտպանիչ մեթոդը (մատնահետք, դեմքով նույնականացում, PIN կամ այլ) և սմարթֆոնը մոտեցնել POS տերմինալին:
- 7.10. Թոքենացված քարտով կատարված գործարքները հավասարազոր են ֆիզիկապես քարտով կատարված գործարքներին, և Քարտապանը իր կողմից թոքենացված քարտով կատարված վճարումների համար կրում է սույն Պայմաններով սահմանված նույն պատասխանատվությունը, ինչը գործում է ֆիզիկապես քարտով կատարված գործարքների համար:
- 7.11. Մինչև քարտի թոքենացումը Հավելվածում կամ Համակարգում Քարտապանը պարտավոր է համոզվել, որ մոբայլ սարքում կամ Հավելվածում գրանցված են միայն իր նույնականացման տվյալները (մատնահետք, դեմքով նույնականացում, PIN կամ այլ), քանի որ միայն վերջիններս են հաշվի առնվելու թոքենացված քարտով կատարվող գործարքների հաստատման համար:
- 7.12. Հավելվածը գործում է նաև առանց ինտերնետի հասանելիության՝ պայմանով, որ կատարված է թոքենացված քարտի բանալիների փոխանակում: Ինտերնետի հասանելիության առկայության յուրաքանչյուր 27-րդ (քսանյոթերորդ) օրը ինքնաշխատ կերպով կատարվում է թոքենացված քարտի բանալիների փոխանակում (թոքենների համարների վերալիցքավորում): Ուստի թոքենացված քարտով վճարումներ իրականացնելու համար անհրաժեշտ է առնվազն 27 (քսանյոթ) օրը մեկ ունենալ ինտերնետին հասանելիություն:
- 7.13. Թոքենացված քարտով կատարված գործարքների բողոքարկման կարգը նույնն է, ինչ սույն պայմաններով սահմանված՝ ֆիզիկական քարտով կատարված գործարքների դեպքում:
- 7.14. Թոքենիզացված քարտերի տվյալներով սարքը կորցնելու, նույնականացման (աուտենտիֆիկացման) կամ թոքենացված քարտի տվյալները գողանալու կամ այլ անձանց հասանելի դառնալու դեպքում թոքենացված քարտի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ: Ընդ որում, նշված պահանջը չկատարելու դեպքում թոքենացված քարտերով կատարված գործարքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
- 7.15. Եթե ֆիզիկական քարտը բլոկավորված է Բանկի կողմից, ապա այդ քարտի թոքենացված քարտով գործարք հնարավոր չէ իրականացնել: Այն դեպքերում, երբ քարտը բլոկավորվում է Քարտապանի կողմից, տվյալ քարտի թոքենիզացված քարտով գործարքների իրականացումը հնարավոր է:
- 7.16. Քարտապանի կողմից թոքենացված քարտի բլոկավորման դեպքում ֆիզիկական քարտը չի բլոկավորվում:
- 7.17. Սույն պայմանների թոքենացված քարտին վերաբերող դրույթները կիրառվում են միայն Քարտապանի կողմից քարտի թոքենացման և թոքենացված քարտի կիրառման առումով: Մոբայլ սարքի և Համակարգի մատակարարը, բջջային օպերատորը և Համակարգին միացված այլ կայքերը և ծառայություն մատուցող երրորդ անձինք ունեն իրենց սեփական պայմանագրերը և պայմանները, որոնց Քարտապանը պետք է հետևի և միայն այդ պայմանների և պայմանագրերով սահմանված կարգավորումների ընդունելի լինելու պարագայում այդ անձանց տրամադրի անձնական տվյալներ, օգտվի դրանց ծառայություններից կամ այցելի համապատասխան կայքեր:
- 7.18. Քարտապանը պարտավոր է մինչև Համակարգում քարտի թոքենացումը ծանոթանալ ներգրավված երրորդ անձանց հետ պայմանագրերի պայմաններին:

8. Այլ դրույթներ

- 8.1. Սույն պայմանների ակցեպտավորմամբ Քարտապանը իր համաձայնությունն է տալիս ստանալ Բանկից կամ Համակարգի մատակարարից Հավելվածի կամ Համակարգի ծառայությունների կարգավիճակի մասին ծանուցումներ հետևյալ կապի միջոցներով՝ էլեկտրոնային հասցե, կարճ հաղորդագրություն (SMS), Push ծանուցումներ, Հավելվածի կամ Համակարգի ծանուցման հնարավորություններ: